ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 56 (24609), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۶۰۹) ۵۶ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԵՐԵՔՇԱԲԹԻ

12 ՄԱՐՏԻ 2024

سه شنبه – ۲۲ اسفند ۱۴۰۲

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

ԱՅՍՕՐ ՄԵԿՆԱՐԿԵԼՈՒ ԵՆ ԻՐԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՉԻՆԱՍՏԱՆ՝ «ԾՈՎԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԳՕՏԻ 2024» ՀԱՄԱՏԵՂ ՌԱԶՄԱԾՈՎԱՅԻՆ ԶՕՐԱՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«ԱԼԻՔ» - Այսօր՝ մարտի 12-ին Հնդկական ովկիանոսի հիւսիսային շրջանում մեկնարկելու են Իրան-Ռուսաստան-Չինաստան համատեղ ռազմածովային զօրավարժութիւնները: Դրանք կրում են «Ծովային անվտանգութեան գօտի 2024» անուանումը:

Զօրավարժութիւնների նպատակը տարածաշրջանում անվտանգութեան ամրապնդումն է, միջազգային ծովային առեւտրի պաշտպանութիւնը, ծովահէնութեան եւ ահաբեկչութեան դէմ պայքարը, ծովային գործողութիւնների ոլորտում օպերատիւ-մարտավարական փորձի փոխանակումը եւ երկրների կարողութեան ցուցադրումը համատեղ պահպանելու համաշխարհային խաղաղութիւնը:

Զօրավարժութիւններին, որպէս դիտորդ ներկայ են լինելու նաեւ Օմանի, Ադրբեջանի, Ղազախստանի, Պակիստանի եւ Հարաւային Աֆրիկայի ԶՈՒ ներկայացուցիչները:

Արամ Ա կաթողիկոսը Սփիւռքի վերակազմակերպման հարցով քաղաքական քննարկումներ կունենայ



Անթիլիասի Մայրավանքում Ազգային Կենտրոնական վարչութեան նիստեր են անցկացել: Այս մասին յայտնում են Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնից:

«Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետին, յառաջիկայ օրերու ընթացքին, Անթիլիասի Մայրավանքին մէջ յաջորդաբար պիտի գումարուին Ազգային Կենտրոնական վարչութեան լիակատար նիստեր:

Առաջին հերթին, Կրօնական ժողովը իր նիստը պիտի գումարէ, ուր պիտի քննուին առաւելաբար կրօնական բնոյթ ունեցող ծրագիրներ ու աշխատանքներ: Երկրորդ օրը Քաղաքական ժողովը պիտի հանդիպի՝ քննելու համար Կաթողիկոսարանի կառոյցներուն գործունէութիւնը: Վեհափառ Հայրապետը նաեւ առանձին հանդիպումներ պիտի ունենայ թեմերու ներկայացուցիչներուն հետ: Իսկ վերջին օրը, պիտի գումարուի Ազգային Կենտրոնական վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովներու խառն նիստ, մասնակցութեամբ թեմական առաջնորդներու եւ թեմերու ազգային վարչութեանց ներկայացուցիչներուն: Յիշեալ հաւաքին օրակարգի հիմնական նիւթը պիտի ըլլայ Սփիւռքի վերակազմակերպումը»,- ասուած է հրապարակուած հաղորդագրութեան մէջ:

Վարդան Ոսկանեան.

«Եթէ ուզում էք հասկանալ, թէ ինչպիսի Հայաստան է իրականում պատկերացնում Բաքուի վարչախումբը նայէք այս «քարտէզին»»



(Տես 8-րդ էջում)

Մենք պատասխանատու ենք ապագայ սերունդների առջեւ Հայոց պետականութեան պահպանման համար

Հայաստանին անհրաժեշտ է հաւասարակշռուած, գրագէտ հաշուարկուած եւ ռացիոնալ արտաքին քաղաքականութիւն, որտեղ առաջնային կը լինեն Հայաստանի, այլ ոչ թէ այլ պետութիւնների ազգային շահերը. գերտէրութիւնների միջեւ շարունակող միջազգային հակամարտութեան մէջ Հայաստանին ներքաշելը յանգեցնելու է անդառնալի հետեւանքների: Ինչպէս փոխանցում է Yerevan.today-ը՝ այս մասին ասած է Ex Oriente Հայաստանի Արեւելագէտների միութեան խորհրդի տարածած

(Շար. 8-րդ էջում)

Փուեա Հոսէյնի.

«Իրանը պատրաստ է հակաքայլերի, եթէ փոխուի Հայաստանի ողջ սահմանը, այլ ոչ միայն Սիւնիքը»

Նրանք փորձում են Իրանին ներքաշել պատերազմի մէջ, իսկ Թեհրանը դա դիտարկում է որպէս դաւադրութիւն եւ փորձում է հարցերը լուծել դիւանագիտական ճանապարհով, բայց պատրաստ է հակաքայլերի՝ Հայաստանի ողջ սահմանի հնարաւոր փոփոխութիւնների, այլ ոչ թէ միայն Սիւնիքի համար: Այս մասին News.am-ի թղթակցի հետ զրոյցում ասել է Իրան-Հայաստան համագործակցութեան զարգացման հիմնադրամի ղեկավար Փուեա Հոսէյնին:

Նրա խօսքով՝ Իրանը մտահոգած է, որ Հարաւային Կովկասը կարող է հակահիրանական գործողութիւնների ցատկահարթակ դառնալ:

Հոսէյնին նշել է, որ Իրանն առաջին հերթին անհանգստացած է Ադրբեջանում Իսրայէլի ներկայութեամբ:

«Իրանը մերժում է Ադրբեջանի կողմից

(Շար. 8-րդ էջում)

Հրանտ Բագրատեան.

«Երբ ես վարչապետ էի, Արեւմուտքն անընդհատ ասում էր՝ էդ Իրանի ճանապարհը փակէք, ասում էի՝ «այ քեզ բան», կաբինետից դուրս էինք հանում»

(Տես 8-րդ էջում)

Մերը գնաց այս երկրից
Ատելութիւնն ուսն առած,
Փուչ հեղեղն է բառերի
Տապից գժած իջնում ցած:
Հեղեղում է մեր գլխին,
Խոլ շառաչն է բախումի,
Դատարկութեան արձագանգ,
Ու լուսնահաչ մի վերջին:
Վերջին մի լաց ու արցունք,
Մեռնող գրգիռ մի վերջին,
Ատելութիւնն ուսն առած
Մերը գնաց այս երկրից:

Ալվարդ Պետրոսեան (1946-2022)
հայ ճանաչուած գրող, հրապարակախօս,
դաշնակցական հասարակական-քաղաքական գործիչ

ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Փակւում է Երեւանի պետական կոնսերւատորիան. սա նոյնն է, ինչ թուրքը գրաւի Երեւանը



Մեներգչուհի, միջազգային մրցոյթների դափնեկիր, Կոմիտասի անուան Երեւանի պետական կոնսերւատորիայի դոցենտ Աննա Պողոսեանը «Ֆէյսբուք»-եան իր էջում անդրադարձել է կոնսերւատորիայի փակմանը.

«Փակւում է Երեւանի պետական կոնսերւատորիան: Սա նոյնն է, ինչ թուրքը գրաւի Երեւանը:

Կոնսերւատորիայի շէնքում հանգրւանելու է մի հերթական հիւրանոց, այսինքն՝ 600 տարի թուրքի աճեցրած գեղջուկների եւ վաշխառուների սերունդ հայախօսները կը տօնեն հերթական յաղթանակը՝ հայրենավաճառ տականքների իշխանութեան շնորհիւ: Աւարտւում է եւ շատ անփառունակ, մի փորձ՝ հայ ազգին հասցնելու երաժշտական մեծ արւեստի աւետիսը: Սա ազգային աղէտի հերթական մի արար է, որն արժանանում է «ազգի» լուռ համաձայնութեան, իսկ իրականում՝ վերջնական ինքնասպանութեան: Կոնսերւատորիայի շէնքը յատուկ կառուցած է երաժշտական արւեստ ուսուցանելու համար: Այն իրականում մեր ազգի երեսն է, որը շուտով վերածւելու է մի հերթական անառականոցի: Ազգը արժանի է պետականութեան, երբ անշարժ գոյքի եկամտաբերութիւնը երկրորդական է արւեստի առջեւ: Ցաւալի է այս ամէնը: Չկայ արցախցի, ով հրապարակաւ դէմ է Արցախի յանձմանը, չկայ գեներալ, ով դէմ է բանակի ոչնչացմանը, չկայ երաժիշտ, ով դէմ է երաժշտական արւեստի ոչնչացմանը: Սա աղէտ էլ չէ, սա ինքնակործանում է: Կոնսերւատորիայի փակման դէմ պէտք է լինէր բոլոր, բոլոր երաժիշտների ընդվզում, բայց այն չկայ: Ինչպէս չկայ ընդվզում պետականութեան կորստի դէմ: Ֆաշիստական այս ինքնանւաստացումը մի օր երեւի կաւարտւի՝ յուսամ ոչ արտաքին նւաճման հետեւանքով: Այսօր կոնսերւատորիայի փակման դէմ բողոքող չկայ՝ ստրուկը կերել է գրեթէ բոլորին:

Հասկանալի է, որ ազգակործան այս հերթական արարը եւս կը պակւի յաջողութեամբ, ինչպէս Արցախի յանձնումը եւ Հայաստանի տարածքների զիջումը: Մնացել ենք 10-15 հոգով, ովքերով սարսափած ենք այս սրիկայութիւնից եւ իրենց «երաժիշտ» համարող ոլորտի անհամար ոչնչութիւններից: Ակնյայտ է, որ կոնսերւատորիայի վերականգնումը՝ հայրենավաճառ տականքների հեռացումից յետոյ, միգուցէ լինի նաեւ անհնար: Ոչ մէկին ոչ մի կոչ չեմ անում, քանզի ստրկացած ազգին նման կոչերով դիմելը անիմաստ է: Չէք ուզում դասական երաժշտութիւն, չէք ուզում Կոմիտաս, ուրեմն ապրէք թուրքական մուղամի տակ: Բայց միեւնոյնն է՝ Հայկը յաղթելու է Բէլին, հայկական երաժշտութիւնը կը վերածնւի, Խաչատուրեանը եւ Բաբաջանեանը, Սպենդիարեանն ու Միրզոյեանը, մեր միւս մեծերը կը վերադառնան, իսկ հիմա՝ դաւաճանների օրերն են, որոնց մենք հայերս, պէտք է դիմանանք»,- գրել է նա:

Մինչ Փաշինեանն ու իր թիմակիցներն ինքնագոհ զւարճանքների մէջ են, Ադրբեջանը նախապատրաստութիւն է տեսնում՝ հերթական պահանջը կեանքի կոչելու համար

ՀՀ ԱԺ «Պատիւ ունեմ» խմբակցութեան պատգամաւոր Տիգրան Աբրահամեանը գրել է.

«Ադրբեջանի պահանջը Տաւուշի 4 գիւղերի յանձնման վերաբերեալ Հայաստան-Ադրբեջան բանակցային գործընթացում նոր բան չէ:

Սրա մասին Ալիեւը բաց տեքստով մի քանի ամիս առաջ էր խօսում, երբ ասում էր, որ ոչ անկլաւային 4 գիւղերն առանց պայմանի պէտք է իրենց յանձնւի, իսկ 4 անկլաւի մասով լրացուցիչ պէտք է քննարկում արւի՝ հասկանալու համար, թէ ինչպէս է դրանց հետ հաղորդակցութիւն ապահովելու:

Խնդիրներից մէկն այստեղ այն է, որ ինչ 2020 թւականից առաջ է եկել սահմանների ճշգրտման հարցը ու թեման բանակցութիւնների օրակարգի մաս դարձել, զուգահեռ Ադրբեջանը 2020-23 թւականների ընթացքում, ուժի ու պարտադրանքի միջոցով, սեփական պատկերացումների շրջանակներում, գաւթել է ոչ միայն Արցախը, այլ ՀՀ մի շարք հատւածներ, որի հետեւանքով հայկական կողմի մի քանի հարիւր զոհ է ունեցել:

Ու մինչ Փաշինեանն ու իր թիմակիցներն ինքնագոհ զւարճանքների մէջ են՝ Ադրբեջանը դիւանագիտական եւ քարոզչական նախապատրաստութիւն է տեսնում՝ հերթական պահանջը կեանքի կոչելու համար»:

Panorama.am

Հայաստանի հետ հնարաւոր պատերազմի ֆոնին Պակիստանը եւ Թուրքիան՝ Բաքւի համար յուսալի գործընկերներ

Ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ արեւմտեան երկրները զէնքի իդէալական մատակարարներ չեն, սակայն Պակիստանն ու Թուրքիան աւելի յուսալի գործընկերներ են թւում Բաքւի համար, որոնք դժւար թէ խզեն գործարքները մարդու իրաւունքների պաշտպանութեան հարցերում առկայ դժգոհութեան կամ Հայաստանի հետ ապագայ հնարաւոր պատերազմների պատճառով:

Այս մասին գրում է Business Insider-ը՝ յիշեցնելով, որ Թուրքիան զէնք է տրամադրել, որը թոյլ է տւել Ադրբեջանին յաղթել 2020 թւականին Լեռնային Ղարաբաղի համար պատերազմում:

Ադրբեջանը մեծ պլաններ ունի առաջիկայ տասնամեակի ընթացքում արդիականացնելու իր համեստ կործանիչների պարկը: Այնուամենայնիւ, իր աւանդական զէնք մատակարարող Ռուսաստանին դիմելու փոխարէն, Բաքուն, ամենայն հաւանականութեամբ, կը գնի առաջադէմ կործանիչներ Պակիստանից եւ Թուրքիայից:

Փետրւարի վերջին ադրբեջանական եւ պակիստանեան լրատւամիջոցներում չհաստատւած տեղեկութիւններ յայտնւեցին, որ Ադրբեջանը Պակիստանի հետ պայմանաւորւածութիւն է ձեռք բերել 1.6 միլիարդ դոլարով JF-17C Thunder կործանիչներ գնելու վերաբերեալ: Անցած յուլիսին Ադրբեջանը պաշտօնապէս միացաւ թուրքական Kaan կործանիչների ծրագրին:

2018 թւականին Ադրբեջանի նախագահը յայտարարել էր, որ իր երկիրը 5 միլիարդ դոլար է ծախսել ռուսական ռազմական տեխնիկայի վրայ: Բայց հիմա դժւար թէ Բաքուն ինքնաթիռների համար դիմի Մոսկւային, թէեւ մինչեւ վերջին տարիներն Ադրբեջանին զէնքի ամենամեծ մատակարարը Ռուսաստանն էր:

Այնուամենայնիւ, իրավիճակը աստիճանաբար փոխւեց, քանի որ Ռուսաստանը սկսեց ագրեսիւ պատերազմ Ուկրաինայի դէմ եւ սկսեց կորցնել ազդեցութիւնը կովկասեան երկրներում, Ուկրաինայում աճող դժւարութիւնների եւ պատժամիջոցների ֆոնին:

Թուրքիան օգտւեց այս իրավիճակից եւ սկսեց ընդլայնել ռազմական համագործակցութիւնը Բաքւի հետ, այդ թւում՝ զէնքի վաճառքի միջոցով: 2017 թւականին Թուրքիայի կողմից Ադրբեջանին վաճառքի ծաւալները սկսել են աճել, մինչդեռ ռուսական զէնքի արտահանումը դադարեցւել է 2019 թւականին:

Այս ֆոնին Պակիստանից JF-17-ների գնման մասին խօսակցութիւններն էլ աւելի են ամրապնդում Մոսկւայից աստիճանական բաժանման միտումը եւ կարող են նաեւ լինել Ուկրաինայում ռուսական ինքնաթիռների (եւ ընդհանրապէս ռազմաօդային ուժերի) վատ աշխատանքի արդիւնք:

News.am

Վարուժան Գեղամեան.

«Թուրքիայի հետ յարաբերութիւնների հաստատումը ներկայացւում է որպէս «ժողովրդի ցանկութիւն»»



Ամերիկեան IRI կազմակերպութիւնը մարտի 11-ին հրապարակել է հերթական սոցիոլոգիական հարցման արդիւնքները: Դրանք անց են կացւել Հայաստանում 2023 թ. դեկտեմբերին: Այս մասին գրում է թուրքագէտ Վարուժան Գեղամեանը:

«Թէեւ դրանցում գրեթէ ոչ մի նոր բան չկայ, սակայն երկու դրւագի վրայ ցանկանում եմ սեւեռել ձեր ուշադրութիւնը:

Առաջին. հարցումները եւս մէկ անգամ փաստում են, որ հայ հասարակութեան ճնշող մեծամասնութիւնը շարունակում է Թուրքիան եւ Ադրբեջանն ընկալել որպէս մեր երկրի գլխաւոր քաղաքական ու տնտեսական սպառնալիք (80%-ից աւելին, տե՛ս 1-ին նկարը): Սա կարեւոր է, քանի որ պետական-իշխանական քարոզը փորձում է հակառակն անել, աւելին՝ Թուրքիայի հետ յարաբերութիւնների հաստատումը ներկայացնել որպէս «ժողովրդի ցանկութիւն», ինչն այդպէս չէ: Այս իմաստով, բարեբախտաբար, հանրային յիշողութեան ինստիտուտները դեռեւս արդիւնաւէտ են աշխատում:

Երկրորդ. հանրային կարծիքի ձեւաւորման վրայ մեծագոյն ազդեցութիւնը շարունակում են ունենալ լրատւամիջոցները: Այստեղ պատկերը, ցաւօք, մխիթարիչ չէ: Հանրութեան համար ամենավստահելի աղբիւրների ցանկի առաջին տասնեակում են գերազանցապէս իշխանական կամ արեւմտամէտ քարոզչութիւն իրականացնող (կամ հէնց ուղիղ արեւմտեան երկրներից ֆինանսաւորւող) մեդիաները (տե՛ս կից 2-րդ եւ 3-րդ նկարները):

Վերջիններիս քարոզի արդիւնքում, օրինակ, Թուրքիայի հետ յարաբերութիւնների որոշակի բերպաւման ընկալում կայ: Միաժամանակ նոյն գործի շնորհիւ ձեւաւորւել է Ռուսաստանի հանդէպ թշնամական ընկալման բարձր աստիճան: Այս իմաստով, ցաւօք, պէտք է խոստովանել, որ դէ-ֆակտո իշխանութիւնների քարոզը շատ արդիւնաւէտ է մնում, ինչը, ըստ իս, իշխանութեան գլխաւոր յենարանն է: Երբ քանդւեց քարոզչական այդ հզօր համակարգը կամ ստեղծւեց հակակշիռ, այդժամ եւ կունենանք բոլորովին այլ քաղաքական պատկեր»,- գրել է նա:





Արտաշէս Շահբազեան.

«Արտաքին շահագրգիռ ուժերի համար անթոյլատրելի շռայլութիւն է, որ Հայաստանում որոշիչ դերակատարութիւն ստանձնի Դաշնակցութիւնը»

ՀՅԴ Հայաստանեան կառոյցը Արցախեան պայքարի ծնունդ է

Հարցազրոյց՝ հրապարակախօս, «Դրօշակ» պաշտօնաթերթի գլխաւոր խմբագիր Արտաշէս Շահբազեանի հետ:

-Պարոն Շահբազեան պատմէք խնդրեմ ինչպէս վերստին Հայաստանում ձեւաւորեց Դաշնակցութեան կառոյցը: Դրա ձեւաւորման սկզբնական օրերից դուք եւս մասնակից էք եղել գործընթացին, ինչ պայմաններում եւ ինչպէ՞ս կեանքի կոչուեց այն, ինչպէ՞ս արդիւնաւորուեց ազգի սերուցքի համախմբումը ազգային նոր պայքարի համար:

- Երբ Արցախեան ազգային զարթօնքը 1988 թւականին ընթացք առաւ Խորհրդային Միութիւնը դեռ անսասան էր որպէս կենտրոնաձիգ կայսրութիւն: Ժողովրդի բարձրացրած յուժկու ալեկոծութիւնը, սակայն, ներքեւում, հասարակական մակարդակում սկսեց տեղ բացել ու ընդլայնել ազգային ու մարդկային ազատութիւնների եւ իրաւունքների սահմանները:

Գաղտնիք չէ, որ նախորդող հարիւրամեակում հայ ժողովրդի ազատագրութեան ու անկախութեան պայքարը գլխաւորել էր Դաշնակցութիւնը: Յետեղեռնեան շրջանի սփիւռքեան կեանքի յարաբերականօրէն խաղաղ տասնամեակներին էլ Դաշնակցութիւնը տէր էր եղել աշխարհասփիւռ հայութեան կենսական խնդիրների լուծմանը՝ այդ թւում եւ անվտանգութեան, ինքնապաշպանութեան ու ազգային դատի հետապնդման ուղղութիւններով: Բնական է, որ հայրենիքում սկիզբ առած ազատագրական ու անկախական պայքարը ոչ միայն հոգեհարազատ էր Դաշնակցութեանը, այլեւ երկար սպասած իրադարձութիւն էր, որի անխուսափելիութեան ու օրինաչափութեան մասին մեր կուսակցական գործիչներն ու պատասխանատուները տարբեր առիթներով, տարբեր ժամանակներում արտայայտել են: 1989 թւականին Դաշնակցութիւնը կազմակերպօրէն վերադարձաւ հայրենիք ու ընդյատակում սկսեց ձեւաւորել կուսակցական կառոյցը:

Սկզբնական շրջանում այն նոյնիսկ հանդէս չէր գալիս իր իրական անւամբ, մի քանի այլ անւանումների ներքոյ ձեւաւորւում էին իրարից անկախ կառոյցներ՝ յընթացս իւրացնելով Դաշնակցութեան գաղափարախօսութիւնն ու գործելակերպը: Մինչեւ Դաշնակցութեան հիմնական կանոնագրի որդեգրումը երկու ժամանակաւոր կանոնագրերով ենք գործել, որոնցում յատկապէս շեշտը դրուած էր գաղտնիութեան եւ առանձին միաւորների ապակենտրոն գործունէութեան սկզբունքի վրայ: Մի երկրում, որը համաշխարհային իմպերիալիզմի կողքին տասնամեակներ շարունակ Դաշնակցութեանը համարել էր իր հիմնական հակառակորդներից մէկը ստիպուած պիտի լինէիր գոնէ վերընձիւղման եւ արմատաւորման փուլում գործելու հնարաւորինս գաղտնաբար: Երբ իշխանութիւններին յայտնի դարձաւ Դաշնակցութեան ոչ բացայայտ ձեւաւորման մասին հէնց կուսակցութեան անունով միանգամից հրապարակ դուրս բերեցին 7-8 ինքնակոչ խմբակների: Պէտք է ասել, որ գաղտնի ծառայութիւններին բնորոշ այս գործելակերպը մի քանի տարի բաւականին շփոթ ստեղծեց հասարակութեան մօտ եւ վնասեց Դաշնակցութեան վարկին:

1989 թւականին մի քանի անձինք են ընդունւել Դաշնակցութեան շարքեր, իսկ 90 թւականի առաջին ամիսներին տեղի ունեցաւ նախապատրաստութեան երկար շրջան անցած հարիւրաւոր թեկնածուների երդմնակալութիւնը, որոնց հիմքի վրայ էլ 90 թւականի նոյեմբերին տեղի ունեցաւ ՀՅԴ Հայաստանի առաջին շրջանային ժողովը: Հիմնադիր այս ժողովը լուծարւած համարեց տարբեր անուններով գործող կազմակերպական օղակները եւ բոլորի անդամներին միաւորելով ձեւաւորեց ՀՅԴ Հայաստանի միասնական կազմակերպական շրջանը, որպէս կենտրոնական կոմիտէութիւն: Ժողովի գումարման եւ Դաշնակցութեան կառոյցի ստեղծման լուրը, ինչպէս եւ նորաստեղծ կենտրոնական կոմիտէի երկու ներկայացուցիչների անունները հրապարակեցին:

Ինչպէս նշեցի վերեւում մինչեւ ՀՅԴ Հայաստանի կենտրոնական կոմիտէութեան կազմումը թեկնածուների հիմքի վրայ, ըստ էութեան, կուսակցական կառոյցը ձեւաւորւել էր մի քանի հրապարակային գործող կազմակերպութիւնների տանիքի ներքոյ, որոնցից էին Հայաստանի Ազգային Անկախութիւն կուսակցութիւնը՝ ՀԱԱԿ, «Միացումը», «Երկաթէ շերեփը»:

Նախապատրաստական շրջանում ընդյատակում ձեւաւորւած կառոյցները հրապարակայնօրէն հանդէս գալով այլ անւանումներով տպագրրում էին իրենց մամուլը, հանդէս էին գալիս այլեւայլ նախաձեռնութիւններով եւ, կարելի է ասել, որ հասցրել էին կայանալ ու ճանաչւել ազգային շարժման ալիքի վրայ Հայաստանում ստեղծւած տարբեր կազմակերպութիւնների շարքում: Անշուշտ դրանց լուծարումն ու Հայաստանում որպէս Դաշնակցութեան մէկ-միասնական կառոյց հանդէս գալը եղել էր բոլորիս երազանքը:

Ազգային համաժողովրդական շարժում էր տեղի ունենում փողոցում, բայց Խորհրդային բռնատիրութիւը կարծես առանձնայատուկ սեւեռւած էր Դաշնակցութեան գործունէութեան դէմ:

Խորհրդային բռնատէրերի համար ամենավտանգաւորը հէնց Դաշնակցութիւնն էր, որովհետեւ վերջինը մարմնաւորում էր հայ ժողովրդի ազատագրական պայքարը եւ շարունակում էր մնալ հայութեան ամենակազմակերպւած ուժը: Առիթից օգտւելով, աւելացնեմ, որ հակադաշնակցական այդ պայքարը երբեք չի ընդհատւել եւ այսօր էլ շարունակւում է: Արտաքին շահագրգիռ ուժերի համար անթոյլատրելի շռայլութիւն է, որ Հայաստանի պէս փոքր երկրում որոշիչ դերակատարութիւն ստանձնի ազգային պետականութեան ակունքներում կանգնած, համաշխարհային կառոյց ունեցող, աւելի քան մէկդարեայ փորձառութեամբ, ազգային-գաղափարական ուժը:

1990 թւականի աշնանը ՀՅԴ կառոյցը, արդէն իսկ կայացած մեծ ցանց էր ամբողջ Հայաստանում եւ Հայաստանից դուրս՝ հայաբնակ որոշ տարածքներում, ինչպէս օրինակ Արցախում: Անհրաժեշտ է արձանագրել, որ մինչեւ Հայաստանում ձեւաւորւելը այդ գործընթացը շատ աւելի արագօրէն տեղի է ունեցել Արցախում: Հայութիւնը Երեւանի եւ Ստեփանակերտի հրապարակներում դեռ «Լենին պարտիա Գորբաչով», «Վերակառուցում ու հրապարակայնութիւն» էր գոռում, Խորհրդային Միութիւնից արդարութիւն ու օրինականութիւն էր պահանջում, այնինչ Սումգայիթում ու այլ վայրերում տեղի էին ունենում ջարդեր եւ տեղահանութիւններ, բռնութիւններ Արցախում եւ շրջակայքի հայաբնակ բնակավայրերում: Դաշնակցութիւնը իր բնագդով ու կենսափորձով շատ շուտ էր հասկացել, որ պայքարը խաղաղ ճանապարհով չի ընթանալու, եւ պատմական արդարութեան վերականգնման մերկայսրութիւն: Ժողովրդի բարձրացրած յուժկու ալեկոծութիւնը, սակայն, ներքեւում, հասարակական մակարդակում սկսեց տեղ բացել ու ընդլայնել ազգային ու մարդկային ազատութիւնների եւ իրաւունքների սահմանները:

Գաղտնիք չէ, որ նախորդող հարիւրամեակում հայ ժողովրդի ազատագրութեան ու անկախութեան պայքարը գլխաւորել էր Դաշնակցութիւնը: Յետեղեռնեան շրջանի սփիւռքեան կեանքի յարաբերականօրէն խաղաղ տասնամեակներին էլ Դաշնակցութիւնը տէր էր եղել աշխարհասփիւռ հայութեան կենսական խնդիրների լուծմանը՝ այդ թւում եւ անվտանգութեան, ինքնապաշպանութեան ու ազգային դատի հետապնդման ուղղութիւններով: Բնական է, որ հայրենիքում սկիզբ առած ազատագրական ու անկախական պայքարը ոչ միայն հոգեհարազատ էր Դաշնակցութեանը, այլեւ երկար սպասած իրադարձութիւն էր, որի անխուսափելիութեան ու օրինաչափութեան մասին մեր կուսակցական գործիչներն ու պատասխանատուները տարբեր առիթներով, տարբեր ժամանակներում արտայայտել են: 1989 թւականին Դաշնակցութիւնը կազմակերպօրէն վերադարձաւ հայրենիք ու ընդյատակում սկսեց ձեւաւորել կուսակցական կառոյցը:

Սկզբնական շրջանում այն նոյնիսկ հանդէս չէր գալիս իր իրական անւամբ, մի քանի այլ անւանումների ներքոյ ձեւաւորւում էին իրարից անկախ կառոյցներ՝ յընթացս իւրացնելով Դաշնակցութեան գաղափարախօսութիւնն ու գործելակերպը: Մինչեւ Դաշնակցութեան հիմնական կանոնագրի որդեգրումը երկու ժամանակաւոր կանոնագրերով ենք գործել, որոնցում յատկապէս շեշտը դրուած էր գաղտնիութեան եւ առանձին միաւորների ապակենտրոն գործունէութեան սկզբունքի վրայ: Մի երկրում, որը համաշխարհային իմպերիալիզմի կողքին տասնամեակներ շարունակ Դաշնակցութեանը համարել էր իր հիմնական հակառակորդներից մէկը ստիպուած պիտի լինէիր գոնէ վերընձիւղման եւ արմատաւորման փուլում գործելու հնարաւորինս գաղտնաբար: Երբ իշխանութիւններին յայտնի դարձաւ Դաշնակցութեան ոչ բացայայտ ձեւաւորման մասին հէնց կուսակցութեան անունով միանգամից հրապարակ դուրս բերեցին 7-8 ինքնակոչ խմբակների: Պէտք է ասել, որ գաղտնի ծառայութիւններին բնորոշ այս գործելակերպը մի քանի տարի բացնկութիւնն էլ պահանջագրերով հնարաւոր չէ լուծել, տեղի ունեցողը յանգելու է մեծ բախման: Հետեւաբար եւ լուրջ նախապատրաստական աշխատանքներ էր իրականացնում գալիք փորձութիւններին դիմակայելու համար: Պատահական չէ, որ Արցախի կուսակցական ընկերների բացարձակ մեծամասնութիւնը դարձան ազգային ազատագրական պայքարի մարտիկներ:

Պէտք է ասել, որ Արցախեան պայքարի ընդերքից Երեւանում ծընւում էին, այլ պահանջներ, ինչպէս բնապահպանական, ցեղասպանութեան ճանաչման, ազգային ու քաղաքացիական այլեւայլ հիմնահարցերի հետ կապւած: Արցախեան պահանջատիրութեան կողքին հէնց նրա ընդերքից ծնւեց ու բիւրեղացաւ, նաեւ Հայաստանի անկախ պետականութեան վերականգնման պահանջը:

Դաշնակցութեան հայաստանեան կառոյցի մասին կարելի է ասել, որ վերջինս արցախեան պայքարի ծնունդ է, եւ այդ կնիքը հոգեբանօրէն կրում է ցայսօր: Դաշնակցականները կուել են բոլոր պատերազմների ժամանակ: Հպարտութեամբ միշտ պէտք է յիշենք, որ ստանձնելով որեւէ կուսակցութեան համար շատ ծանր բեռ Դաշնակցութիւնը ձեւաւորել էր ՀՅԴ Շուշի առանձնակի գումարտակը, որը պատերազմի ամենադժուարին ճակատներում յաջողութեամբ կռիւ էր մղում Արցախի ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր հրամանատարութեան ներքոյ: Առաջին փուլում մեր ընկերներն ու առանձին ջոկատները կուել են նաեւ Հայաստանի սահմանային ողջ բախման գօտում, իսկ ովքեր չէին կուում հիմնականում զբաղւած էին ի աջակցութիւն Արցախեան պայքարի ու պայքարողների իրականացող այլեւայլ աշխատանքներով: Առանց չափազանցութեան կարող եմ ասել, որ այն ինչ այս օրերին տեղի ունեցաւ Արցախի հետ Հայաստանի դաշնակցականները ընկալում են որպէս անձնական ողբերգութիւն: Յատկապէս մեր ազգային պայքարի առաջին տարիներին Դաշնակցութեանն անդամագրւածներին սխալ չէ անւանելը Արցախեան պայքարի սերունդ:

Հեշտ չի եղել Դաշնակցութեան գործը, նրա պայքարի ընթացքը: Անկախ Հայաստանի առաջին իշխանութիւնները ազգային աւանդական եւ պետականակերտ կուսակցութեան նկատմամբ որդեգրեցին այն նոյն վերաբերմունքը ինչ ունեցել էին խորհրդային իշխանութիւնները: Ի դէպ սրանց քաղաքական ժառանգորդն էլ դարձաւ նիկոլական հակազգային իշխանութիւնը: Ինչպէս վերեւում ակնարկեցի մշտապէս զգալի է եղել նաեւ Դաշնակցութեան հնարաւորութիւնները սահմանափակելու արտաքին ուժերի թելադրանքը: Հալածանքներն ու վարկաբեկումները, ուղղւած են եղել նրան, որպէսզի թոյլ չտան, որ Դաշնակցութեան ազգային գաղափարները տարածւեն դառնան հայ ժողովրդի մտածումներն ու տենչերը: Այդ ամենով հանդերձ Դաշնակցութիւնը ձեւաւորւել է, ոտքի է կանգնել, իր կառոյցներով դարձել է ամենաամուրը, ամենակազմակերպւածը եւ ամենազաղափարականը ու այդպիսին է մնում ցայսօր: Մեր կողքին Հայոց համազգային շարժումը իր մէջ ներառաւ հասարակութեան հսկայական հատուածի, սակայն իշխանութիւնը կորցնելուց յետոյ այդ աւազէ բուրգը փլուզուեց: Նոյնը տեղի ունեցաւ Հանրապետական կուսակցութեան եւ փաստացի, անկախութեան առաջին տասնամեակին ասպարէզ իջած բոլոր մեծ ու փոքր կուսակցութիւնների հետ, բացառութեամբ Դաշնակցութեան: Ի դէպ կասկած չկայ, որ իշխանութիւնը կորցնելուց յետոյ այսօրուայ իշխող քաղաքական ուժից մնալու է միայն դառն ու ամօթալի յիշողութիւն:

Այսքանից յետոյ աւելացնեմ, որ այնպէս չէ, թէ մենք մեզանով հիացած ենք: Բոլորիս աչքի առջեւ տեղի ունեցաւ Արցախեան ողբերգութիւնը եւ հիմա Հայաստանի պետականութեան ապագան է մշուշւում՝ գլխաւորաբար բախտախնդիր իշխանութիւնների վարած քաղաքականութեան պատճառով: Եթէ ցայսօր մեզ չի յաջողուել հայութեան գլխին կախւած առկայ սպառնալիքները չէզոքացնել նշանակում է դեռ մեծ առաքելութիւն կայ մեր ուսերին՝ ժողովրդի ճակատագիրը խաղաղ, ապահով ու արժանապատիւ մայրուղի դուրս բերելու հարցում: Եւ, առհասարակ, Դաշնակցութիւնն իրենից գոհ լինել չի կարող քանի դեռ չեն իրագործւել հայ ժողովրդի հաւաքական իղձերն ու նպատակները:

- Այդ տարիներին հասունացաւ Դաշնակցութեան գործունէութեան համար պարարտ հող, նման մթնոլորտի ձեւաւորման համար ինչ նախադրեալներ կային եւ ինչպէ՞ս այդ միջավայրում մեծացաւ կուսակցութիւնը:

-Արցախի ազատագրութեան եւ հայոց պետականութեան վերականգնման նպատակներ՝ ահա այն գաղափարական պարարտ հողը, որի վրայ կուսակցութիւնը ցանեց իր սերմերը: Դաշնակցութիւնը Հայաստան մտաւ թեւերը լայն բացած, իր բոլոր կառոյցներով, նաեւ իր ուղեկից միութիւններով, որովհետեւ դրա անհրաժեշտութիւնը կար: Ձեւաւորուեցին ՀՄԸՄ-ը, ՀՕՄ-ը, «Համազգային» հայ կրթական եւ մշակութային միութիւնը: Ի դէպ իրենց բնագաւառում եւ ոչ կառավարական կազմակերպութիւնների թւում դրանք առաջատարները եղան Հայաստանում:

Հայաստանում մենք առաջին շրջանում բաւական լաւ քարոզչական ցանց էինք ստեղծել: Առաջին հաստատութիւններից մէկը, որ կուսակցութիւնը 1991 թւականին հիմնեց Երեւանում ՀՅԴ մամլոյ եւ տեղեկատւութեան գրասենեակն էր՝ առաջին անկախ լրատւական կենտրոնը Հայաստանում: Նոյն թւականին հիմնադրեցին ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական կոմիտէի օրգան «Երկիր» թերթը եւ ՀՅԴ Բիւրոյի հայաստանեան պաշտօնաթերթ «Ազատամարտ»-ը: Բաւական է ասել, որ «Երկիր» պաշտօնաթերթը տպագրրւում էր 45000 տպաքանակով, իսկ «Ազատամարտ»-ը հայերէն տարբերակով 20, եւ ռուսերէն տարբերակով 8 հազար տպաքանակով: Այն ունէր իր գրական «Վարուժան», ռազմադաստիարակչական «Ասպար», տեսական-իմաստասիրական «Միտք», «Զանգակ» մանկական յաւելւածնեը: Մեր պաշտօնաթերթերի տպաքանակները աննախադէպ էին Հայաստանի համար:

-Այդ տարիներին հրատարակւած «Ազատամարտ»-ի վերաբերեալ ինչ կասէք:

-«Ազատամարտ»-ը շատ հետաքրքիր թերթ էր, տպագրւում էր մաշտոցեան ուղղագրութեամբ, ինչպէս նշեցի ունէր նաեւ իր ռուսերէն տարբերակը: Խմբագրապետ էր նշանակւել Մուշեղ Միքայէլեանը, որը Հայաստանի առաջին դաշնակցականներից էր: Նրան յաջողւել էր շատ լաւ խմբագրակազմ հաւաքել, խմբագիրների մեծ մասը կայացած անհատներ էին՝ դասախօսներ, մտաւորականներ, որոնք գլխաւորեցին թերթի տարբեր բաժինները՝ Քաղաքական, Տնտեսական, Հայ կեանք, Հասարակութիւն, Մշակոյթ, եւ այլն: Ինքս թերթ էի հրաւիրւել ՀՅԴ մամլոյ եւ տեղեկատու գրասենեակից եւ աշխատել եմ թերթում մինչեւ իր գոյութեան վերջին օրը՝ 1994 թւականի դեկտեմբերի 28-ը: Այդ գիշեր նախապատրաստում էինք տարւայ ամփոփիչ համարի լոյս ընծայումը, երբ տեղի ունեցաւ ՀՀՇ-ական իշխանութիւնների՝ կազմակերպած խայտառակութիւնը՝ Դաշնակցութեան գործունէութիւնը կասեցուց, մի շարք ընկերներ ձերբակալուեցին, որոշները յայտարարուեցին անցանկալի անձեր, ջարդ ու փշուր արուեցին, թալանուեցին, կողոպուեցին եւ ոստիկանութեան հսկողութեան տակ առնուեցին կուսակցութեան բոլոր գրասենեակներն ու խմբագրատները: Ցաւօք այս անգամ էլ այսպիսի աւարտ ունեցաւ «Ազատամարտ»-ի «կենսագրութիւնը»: Խմբագրապետ Մ. Միքայէլեանը յաճախ էր ասում. «Պէտք է վերականգնել հայ մամուլի աւանդոյթները»: Չգիտեմ որքանով մեզ յաջողուեց, սակայն փորձում էինք կայացնել ազգային ոգի եւ շունչ ունեցող, գաղափարական, միաժամանակ ազատ, համարձակ թերթ, որը հաւատարիմ կը լինէր իր անւանն ու այն աւանդներին, որոնք ունեցել էր իր նախորդը՝ 1909 թւականից մինչեւ 1915 թւականի Ապրիլի 24-ի գիշերը Պոլսում հրատարակւած «Ազատամարտ»-ը (առաջինին գրլխատեցին երիտթուրքերը, երկրորդին՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի վարչախումբը): Պէտք է նշել, որ «Ազատամարտ»-ը եւ մնացած մեր մամուլը մեծ դեր են խաղացել յետխորհրդային հասարակական մտքի, վերափոխման, ազգային մտածողութեան,

(Շար. 6-րդ էջում)

Վարդանանց ազատամարտի տօնակատարութիւն՝ Հայ Ուս. «Չհարմահալ» միութիւնում «Չիմացեալ մահը՝ մահ է, իմացեալը՝ անմահութիւն»

Ընկալեալ սովորութիւն է դարձել, միութեան յարկի ներքոյ, իւրաքանչիւր տարի, Հայ Ուս. «Չհարմահալ» միութեան գրական-գեղարուեստական միաւորի նախաձեռնութեամբ, նշելու Վարդանանքի տօնը, սակայն բոլորիս յայտնի պատճառներով, քանի տարի էր դադարել էր այն, վերջապէս այս տարի հովանաւորութեամբ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի եւ «Չհարմահալ» միութեան գրական-գեղարուեստական միաւորի նախաձեռնութեամբ, փետրուարի 25-ին, Հայ Ուս. «Չհարմահալ» միութեան «Յովհ. Թումանեան» սրահում, յաջողուեց տօնել «Աւարայրի հերոսամարտը»: Ձեռնարկը համեմուած էր՝ բանախօսութեամբ, երգչախմբային կատարումներով եւ բեմադրութեամբ:

Բացման խօսքով հանդէս եկաւ միաւորի պատասխանատու՝ Տանիա Վարդանեանը, որն իր խօսքերում անդրադառնալով հայ ժողովրդի մօտ Վարդանանց ոգու գոյատեւմանը, նշեց. «Ազատատենչ այդ ոգին, այնքան գեղեցկօրէն պայծառացած Աւարայրի ճակատամարտով, հինգերորդ դարից սկըսած ցայսօր, հայ սերունդներին առաջնորդել եւ առաջնորդում է դէպի աննահանջ կամք, ունենալու՝ ազատ եւ անկախ հայրենիք, որը մեր օրերում խտացուած է «Հայ Դատի» պահանջատիրութեան գաղափարախօսութեան մէջ:» Նա այսպէս շարունակեց. «Յաւօք, վերջին տարիներում, պահանջատիրական յախտոն մեր պայքարները կարծես սառել են, հայը երբեք այսպիսին չի եղել, ազգը կարծես թմբիրի մէջ է, չի զգում ցաւի խորութիւնը, երբ ֆիզիկապէս կորցրել ենք, աւելի քան երեսուն տարի առաջ, մահն անտեսած հայ քաջարի մարտնչած սերնդի արեան գնով, մօր գիրկը վերադարձրած, հայից խլուած Արցախը»:

Բացման խօսքից յետոյ, բեմ հրաւիրուեց օրուայ բանախօս՝ Տ. Արիստակէս քհնյ. Շահմիրեանը:

Բանախօսը, ուսուցողական եւ շատ սպառիչ կերպով վեր հանեց Աւարայրեան դիւցազնական դրուագներն: Բանախօսը կարեւորութեամբ անդրադարձաւ հայ ժողովրդի գոյապայքարում Վարդանանց ոգու դրսեւորմանը: Իր ելոյթի այլ բաժնում Տ. Արիստակէս քհնյ. Շահմիրեանը ցաւով անդրադարձաւ այս օրերին հայոց երկնակամարում յայտնուած անորոշ իրավիճակի մասին,յոյս յայտնելով, որ հայ ժողովուրդը միաւորուած տեսնի իր ամբողջական հայրենիքը:

Ձեռնարկի գեղարուեստական բաժնում, իրենց մասնակցութիւնն էին բերել՝ միութեան «Ուրարտու» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Ժոզէֆ Տէր-Գալստանեանի, դաշնամուրի նուագակցութիւնը, իւրայատուկ խորհրդաւորութիւն պարգեւեց հանդիսատեսին:

Երգչախումբը կատարեց հետեւեալ երգերը.-

«Ով հայոց աշխարհ», խօսք՝ Տարօնցիի, երժշտ.՝ Մակար Եկմալեանի, «Ուռին», խօսք՝ Ա. Վ. Իսահակեանի, երժշտ.՝ Դ. Ղազարեանի, մենակատարներ՝ Էմիլի Ինջիրղուլեան եւ Ֆրէդ Մաւաթեան, «Էրեբունի- Երեւան», խօսք՝ Պարոյր Սեւակի, երժշտ.՝ Էդգար Յովհաննիսեանի, «Արփա-Սեւան», խօսք՝ Իւրի Սահակեանի, երժշտ.՝ Էդգար Յովհաննիսեանի եւ «Հայաստան», խօսք՝ Յ. Ղուկասեանի, երժշտ.՝ Ա. Այւազեանի: Բոլոր երգերի երաժշտութիւնը վերամշակել էր «Ուրարտու» երգչախմբի խմբավար եւ դաշնակահար Ժոզէֆ Տէր-Գալստանեանը: Ընդմիջումին ներկաները ըմբոշխնեցին՝ Հայրիկ Մուրադեանի կատարած «Հայրենեաց հոգի Վարդան» երգը:

Գեղարուեստական յայտագրի վերջին բաժնում, միաւորի անդամուհի, դերասանուհի եւ բեմադրիչ՝ Անի Զաքարեանի ջանքերով եւ միաւորի աջակցութեամբ, բեմադրուեց Վարդանանքից մի հատուած: Դերերում էին՝ Ժորժիկ Իսաւին, Էրիկա Իսաւին, Վանեսա Իսաւին եւ Անի Յովհաննիսեանը պատմիչ: Ներկայացումը, շատ հետաքրքիր լուծում էր ստացել, սկզբում աղջիկները՝ որպէս աշակերտուհիներ, հաւաքւում են մէկի բնակարանում եւ որոշում են ինչպէ՞ս կազմակերպել հայոց լեզուի ուսուցչուհու տուած յանձնարարութիւնը, բեմադրելով Վարդանանց պատերազմը եւ այսպիսով սկսւում է բեմադրութիւնը:

Ձեռնարկի աւարտին, շնորհակալական ոգեւորիչ եւ քաջալերական խօսքերով ելոյթ ունեցաւ՝ ժամանակին Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր ճրտ. Վարդան Վարդանեանը, ով շնորհաւորելով Վարդանանց տօնը, խրախուսեց միութեանը յաճախակի կազմակերպել նմանատիպ ձեռնարկներ:

Այնուհետեւ, առ ի երախտագիտութիւն, միաւորը, Կենտրոնական վարչութեան կողմից, շնորհակալական խօսքերով մեծարեց եւ գնահատեց «Ուրարտու» երգչախմբի խմբավար՝ Ժոզէֆ Տէր-Գալստանեանին, թատրոնի բեմադրիչ՝ Անի Զաքարեանին, երգչախմբի եւ թատրոնի աշխատանքներում իրենց մասնակցութիւնը բերած բոլոր մասնակիցներին եւ ձայնի եւ լոյսի պատասխանատուներ՝ Արա Աբրահամեանին, Արմին Մեհդիխանեանին եւ բեմայարդար՝ Էդիկ Աբրահամեանին, իւրաքանչիւրին մէկական ծաղիկ նուիրելով: Մասնաւոր շնորհակալական խօսք ուղղուեց, օրուայ բանախօս Տ. Արիստակէս քհնյ. Շահմիրեանին, շատ շահեկան եւ ուսուցանող բանախօսութեան համար:

Վերջում, տեղի ունեցաւ ընդունելութիւն:

Հայ Ուս. «Չհարմահալ» միութեան Կենտրոնական վարչութիւն եւ գրական-գեղարուեստական միաւոր

Կազմեց՝ Տանիա Վարդանեանը

Հ. Մ. «Սիփան» միութիւնը՝ հայոց ազգային դպրոցների աջակից

Հ. Մ. «Սիփան» միութիւնը առաջնորդուելով մատաղ սերնդի ֆիզիկական եւ մտային պատրաստուածութեան եւ դպրոց-միութիւն կապի ամրապնդման գաղափարներով 2023 թւականի դեկտեմբեր ամսից մինչ թւականիս մարտ ամսւայ աւարտը՝ Համադրպրոցական խաղերի առթիւ պատրաստուածութեան համար համագործակցութեան ձեռք մեկնեց Թեհրանի հայոց ազգային «Թունեան», «Նայիրի», «Արարատ» եւ «Շանթ» տարրական դպրոցներին եւ աւելի քան 80 պահով տրամադրեց իր «Նորայր Էլսայեան» մարզադահլիճը նշեալ դրպրոցների մարզումների համար: Միութիւնս միշտ յօժարակամ մասնակցել է եւ կը մասնակցի համայնքի զարգացմանը առչւող նախաձեռնութիւններին: Մենք քաջ գիտակցում ենք, որ Համադպրոցական խաղերը առիթ են ստեղծում հայ դպրոցականների ֆիզիկական զարգացմանը, որի շրջանակում նաեւ կարեւոր դաստիարակչական դասեր այդ թւում ընկերասիրութիւն, զիջում, համագործակցութիւն եւ այլ վայել պահուածքներ են փոխանցում հայորդիներին:

Յուսանք, որ հայոց դպրոցները տարէցտարի աւելի կը կարեւորեն միութիւնների հետ համագործակցութիւնը եւ ձեռք-ձեռքի տուած միասնական ուժերով կը կերտենք ուժեղ եւ հզօր համայնք:

Հ. Մ. «Սիփան» միութիւն

«Հայ երիտասարդութիւնը խորացող մարտահրաւէրներին ընդառաջ» խորագրով կլոր սեղան-քննարկում

ՀՅԴ «Նիկոլ Աղբալեան» Ուսանողական միութեան նախաձեռնութեամբ «Արամ Մանուկեան» Երիտասարդական կենտրոնում մարտի 7-ին տեղի ունեցաւ «Հայ երիտասարդութիւնը խորացող մարտահրաւէրներին ընդառաջ» թեմայով կլոր սեղան-քննարկում՝ մասնակցութեամբ շուրջ 20 տարբեր ուսումնական հաստատութիւնների ուսանողների: Քննարկման խօսնակներն էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնէական դաստիարակութեան կենտրոնի տնօրէն Հայր Զաքարիա ծայրագոյն վարդապետ Բաղումեանը եւ ՀՅԴ անդամ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արմենուհի Կիւրեղեանը:

Արմենուհի Կիւրեղեանը անդրադարձաւ կրթութեան ոլորտում ծառացած մարտահրաւէրներին, ի թիւս այլնի, օրինակ, ԲՈՒՀ-երի պրոֆեսորա-դասախօսական կազմին. «Պրոֆեսորա-դասախօսական կազմում նկատում ենք ակնյայտ ծերացում: Այսօրւայ վարած քաղաքականութեան արդիւնքում երիտասարդները գրեթէ չեն ձգտում մտնել ԲՈՒՀ-ական համակարգ, որովհետեւ այդ համակարգն իրենց համար հետաքրքիր չէ նախ եւ առաջ ֆինանսական առումով: ԲՈՒՀ-ական համակարգում պրոֆեսորա-դասախօսական կազմի աշխատավարձը մեղմ ասած ծիծաղելի է: Երեւանում միջինում պրոֆեսորի աշխատավարձը 180 հազար դրամ է, իսկ Գիւմրիում, Վանաձորում՝ 150 հազար դրամի կարգի, դոցենտինը՝ 130-140 հազարի կարգի, դրա համար էլ երիտասարդը չի ուզում այդ ոլորտ մտնել: Արդիւնքում՝ ստացւում է, որ վաղը-միւս օրը չենք ունենալու այն պրոֆեսորա-դասախօսական կազմը, որը կապահովի արժանապատիւ եւ որակեալ կրթութիւն մեր ԲՈՒՀ-երում: Այս կառավարութեան առջեւ պէտք է նման հարցադրումներ դնել: Աշխատավարձի բարձրացումը շատ կարեւոր է: Նաեւ ԲՈՒՀ-երը երիտասարդին հետաքրքիր չեն, որովհետեւ մեր ԲՈՒՀ-երն աւելի շատ ակադեմիական բնոյթի են, հետազօտական մասը մի քիչ պակասում է»: Արմենուհի Կիւրեղեանը խօսեց նաեւ ԲՈՒՀ-ական համակարգում կառավարման խնդիրներից:

Հայր Զաքարիա ծայրագոյն վարդապետ Բաղումեանն իր խօսքում նշեց, որ երիտասարդները ոչ միայն մեր երկրի, Եկեղեցու ապագան են, այլեւ՝ ներկան:

«2021 թւականի փետրուարի 4-ին ՀՀ կառավարութիւնը հաստատեց հանրակրթութեան պետական չափորոշիչը. գրուեցին ձեռնարկներ, դասագրքեր: Քաղաքականութիւնը հետեւեալն է՝ ինչ տեսակ մարդ ենք ուզում պատրաստել, բայց որեւէ խօսք չկայ մարդու ինքնութեան ամրապնդման ու զօրացման մասին: Մայր Աթոռն ասում էր, որ նախագիծը պէտք է վերանայի, ստեղծւի չափորոշիչ, որը պէտք է դաստիարակի մի հայ, որն ամբողջովին պէտք է կապւած լինի իր հող ու ջրին... Որ դասարանում մտնում է կրթութեան չափորոշիչը, այդ դասարանից դուրս է գալիս Հայոց Եկեղեցու պատմութիւնը»,-ցաւով արձանագրում է. Զաքարիա ծ. վրդ. Բաղումեանը:

«Հայ Եկեղեցին նաեւ ազգային կառոյց է, որ մեր ժողովրդի կեանքի բոլոր փուլերում դերակատարութիւն է ունցել»,-այս մասին, ՀՅԴ «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութիւնում կազմակերպւած կլոր սեղան-քննարկմանն ասաց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնէական դաստիարակութեան կենտրոնի տնօրէն Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումեանը:

«Եկեղեցին, եթէ պաշտօնապէս իր մտահոգութիւններն է արտայայտում տարբեր խնդիրների վերաբերալ, եւ եթէ սա ընկալւում քաղաքականութեամբ զբաղուել, ուրեմն մենք քաղաքականութեամբ զբաղւում ենք. Եկեղեցին չի կարող չխօսել Արցախի խնդրի մասին, չի կարող չյիշեցնել մեր վանքերի, արցախցու իրաւունքների մասին, Եկեղեցին պիտի լինի բարոյականութեան պահապանը, քարոզողը»,-ասաց Հայր Սուրբը՝ նշելով. «Կարծես կորցրել ենք վտանգի զգացողութիւնը... Պէտք է հայրենասիրական ճառերից անցնենք գործնական հայրենասիրութեան»:

Arfd.am

Գեներալ Իշխան Մատթէոսեան.

«Երկիրը յանձնւած է արտաքին ղեկավարման ռեժիմի, որում սպասարկւում են բոլորի շահերը՝ բացի Հայաստանից»

Ծայրաստիճան վտանգաւոր այն իրաւրութիւնը, որը ստեղծւել է մեր պետութեան շուրջ եւ առհասարակ Հարաւային Կովկասում, մէկ օրւայ գործ չէ, դրա սկիզբը դրւել է վաղուց: Ինչ վերաբերում է մեր երկրին՝ ՀՀ-ին, դա այն գործունէութեան եւ քաղաքականութեան արդիւնքն է, որը վարում է ներկայ իշխանութիւնը՝ դրսեւորելով քաղաքական տհասութիւն: Տարածաշրջանում ուժերի եւ իրողութիւնների դասաւորւածութիւնը մէկ օրւայ ընթացքում չի ձեւաւորւել ո՛չ երէկ, ո՛չ էլ մէկ ամիս առաջ: Այն ձեւաւորւել է՝ սկսած 2018 թւականից, եւ արդիւնք է օրւայ իշխանութիւնների ապազգային քաղաքականութեան: Արդէն որեւէ մէկի համար գաղտնիք չէ, որ այս իշխանութիւնը սպասարկում է ցանկացած այլ ուժային կենտրոնի շահերը՝ բացի Հայաստանի շահից, եւ, որպէս կանոն, դա կատարւում է ի վնաս եւ ի հաշիւ Հայաստանի շահերի: 168TV-ի «#ՕրաԽնդիր» հաղորդման ժամանակ նման կարծիք է յայտնել պահեստազօրի գեներալ-մայոր Իշխան Մատթէոսեանը:

«Մեր երկրի շուրջ մենք տեսնում ենք աշխարհաքաղաքական լուրջ ուժային կենտրոնների շահերի բախում, որը կարծես հասել է իր կիզակէտին: Մի կողմից՝ տեսնում ենք Իրանի Իսլամական Հանրապետութեան դիրքորոշումը, ապա՝ հաւաքական Արեւմուտքի, Թուրքիայի, Ադրբեջանի, ինչո՞ւ չէ՝ այս հարցերն ինչ-որ չափով վերաբերում են նաեւ Կենտրոնական Ասիայի հզօր պետութիւններին: Տեղի է ունեցել շահերի բախում, որտեղ իւրաքանչիւր պետութիւն ուզում է օգտւել ընձեռած հնարաւորութիւնից՝ յօգուտ իր շահերի, եւ չգալով համաձայնութեան՝ ստեղծւել է կոնֆլիկտային պոտենցիալ, պատերազմի վերսկսման նախադրեալներ, որն այսօր ունենք: Դա չեն թաքցնում նաեւ օրւայ իշխանութիւնները»,- ասել է ռազմական գործիչը:

«Հիմնական պայքարը Մեղրիի միջանցքի եւ Սիւնիքի շուրջ է: Բոլորս էլ հասկանում ենք՝ ինչ է իրենից ներկայացնում Մեղրիի միջանցքը: Դա ուղղակի 42 կմ.-անոց ճանապարհահատւած չէ, այն մեծ լոգիստիկ, կոմունիկացիոն

(Շար. 6-րդ էջում)

Անթալիայէն Արցախ

«Պատերազմի հիմնական հետեւանքը ոչ թէ անպայման շնչող էակներու, այլ մարդ էակին աշխատանքով արտադրւածին ոչնչացումն է»
Ջորջ Օրուէլ
(1903-1950, բրիտանացի գրագէտ)

Անթալիոյ մէջ կազմակերպւած դիւանագիտական գիտաժողովի օրերուն, երբ բեմահարթակին վրայ, բարձրաստիճան պատւիրակութիւններու մասնակցութեամբ կը քննարկւէր այսպէս կոչւած՝ կառուցողական «Խաղաղութիւն, զարգացում եւ փոխկապակցւածութիւն Հարաւային Կովկասի մէջ» նիւթը, ճի՛շտ նոյն օրերուն, ամայացած եւ բռնախլւած Ստեփանակերտի մէջ այլ տեսակի «կառուցողական» գործ կը տարւէր, այսինքն՝ քանդումի եւ կործանումի աշխատանք՝ ազերիական վիթխարի «բուլդոզըր»-ներու միջոցով. ազերիները իրենց «բարեացակամութեան» նորագոյն ցուցահանդէսը կիրագործէին՝ քանդելով Արցախի խորհրդարանին շէնքը, նաեւ կողքի կառոյցները, իսկ ասոնք պատճառ չեն, որ մոռացութեան տանք մշակութային կոթողներու, եկեղեցիներու քանդումն ու եղծումը:

Զարմանալի վիճակ, որ սակայն... զարմանալի չէ, ո՛չ ալ անակնկալ, երբ մտաբերենք ընդհանուր պատկերը, նախընթաց քանդումները:

Մինչ Հայաստանի իմաստո՛ւն ներկայացուցիչները Թուրքիոյ ձեռք կերկարէին ի՛ խնդիր խաղաղութեան, անդին՝ Ստեփանակերտի մէջ, քանդումը կը շարունակւէր ու վերջ չէ գտած:

Ողբերգական են պատկերները, յատկապէս՝ Ազգային ժողովի շէնքի քանդումին: Շնչող էակներու ջարդէն եւ բռնագաղթէն ետք, հիմա, նոյնինքն այդ մարդ արարածներուն կերտած գո՛րծն է, որ կը քանդւի, իսկ աշխարհը, ներառեալ 19 Բաղրամեան պողոտայի «ազգընտի՛ր» վարձակալներն ու վարձկանները ձեռնածալ կը մնան, աննկատ թողելով ճերմակ ջարդը:

Եթէ հարց տանք այս «ազգընտիր ներկայացուցիչներուն», թէ ըսելիք ունի՞ն, հաւանաբար պատասխանեն. «Արցախը Ադրբեջանի կը պատկանի, ազերիները իրաւունք ունին իրենց հողին վրայ ընելու այն՝ ինչ որ կուզեն»: Չէ՞ որ այդ «ներկայացուցիչներուն» մանդատաւոր պետն ալ ատենին կը յոխորտար, թէ իրենք կընեն այն՝ ինչ որ կուզեն...»

Անտարբերութիւնը այնպիսի ծաւալի հասած է, որ Հայաստան, իբրեւ բարի կամքի դրսեւորում, եւ կիրարկելու համար Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բարձրագոյն մակարդակի վրայ ձեռք բերւած համաձայնութիւն մը (ըստ որուն՝ երկու կողմերու մոլորած եւ հակառակորդի կողմը յայտնւած զինւորները պէտք է վերադարձւին), առանց այլեւայլի որոշեց Ադրբեջան վերադարձնել 28 փետրուարին, Սիւնիքի մարզի Տեղ համայնքի հատւածին մէջ Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան նախարարութեան զինւորներու կողմէ ձերբակալւած ազերի զինւորը: Մինչ այդ, Հայաստանի Հանրապետութեան Ազգային անվտանգութեան ծառայութիւնը, յաւելեալ տեղեկութիւններ քաղելով՝ տեղեկացուցած էր, որ դէպքին մասին Հայաստանի Քրէական օրէնսգիրքի համապատասխան յօդւածներով նախաձեռնւած է թղթածրար պատրաստել: Յայտնի չէ, թէ այդ թղթածրարը պատրաստւեցա՞ւ ու զինւորին հետ Բաքու ղրկւեցա՞ւ...

Եւ այսպէս, կառուցողական... քանդումը կը շարունակւի:

Անթալիոյ մէջ, թէ՛ Թուրքիոյ յատուկ բանագնաց Մերտար Քըլըչ եւ թէ՛ Հայաստանի ներկայացուցիչ Ռուբէն Ռուբինեան շեշտեցին, թէ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին մէջ, առաջնահերթ է Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւնները կայուն կարգաւորման հասցնելը, պարզապէս որովհետեւ նմանօրինակ կարգավիճակ «...պիտի ապահովէ հիմք՝ ամբողջ Հարաւային Կովկասի տարածաշրջանի բարգաւաճման համար»: Իսկ գործնական գետնի վրայ, սա կը թարգմանւի նորանոր քանդումներով եւ հայկական հետքերու փոշիացումով: Տեսէ՛ք թէ ինչպիսի՛ բարգաւաճում կը ցուցադրւի Հայաստանի հորիզոնին վրայ: Ատկէ անդին, ի՞նչ ըսել, երբ թուրք ներկայացուցիչը հայկական կողմը... Երեւան կը հրաւիրէ բանակցութեան համար: Մարդիկը փաստօրէն կըսեն, թէ Երեւանը իրենցն է արդէն, «էհ...էդի՛ալ համեցէք»:

Ինքզինք անհեթեթութեան տարած, անկարողութեան մատնած ԻՒՆԵՍԿՕ-ն ալ, ըստ սովորութեան, կը դիտէ եւ կը հետեւի, ամենադոյն բողոքն անգամ չարտայայտելով: Չէ՞ որ Բաքւի նաւթի հանքերէն կաթիլներ կը հասնին իրեն...

Աշխարհը մինչեւ ե՞րբ պիտի շարունակէ մնալ անբան ու անգործ դիտորդ: Կրկնենք. բայց ինչո՞ւ զարմանալ, երբ գլխաւոր իրաւատէրն ու երաշխաւորը՝ Երեւանի իշխանութիւնը ուրիշ կողմ կը նայի, կը շարունակէ վազել ցնորքներու ետեւէն, եւ հայրենիքն ու ազգն ալ տանիլ իրեն հետ՝ անդունդն ի վար:

Մէկ բան յստակ է. եկեղեցիներու գմբէթներէն խաչերը վար առնելով, եկեղեցիները սրբապղծելով եւ այլափոխելով, կիսանդրիներ եւ խաչքարեր քար ու քանդ ընելով եւ նոյնիսկ Արցախի խորհրդանիշը՝ Ազգային ժողովի շէնքը քանդելով, կարելի պիտի չըլլայ քանդել ու վերացնել արցախահայութեան կամքն ու պահանջատիրութիւնը, որ ամբողջ հայութեա՛ն համար առաջնահերթութիւն մըն է, ո՛չ մէկ աղերս ունի Անթալիոյ մէջ տեղի ունեցած շինծու գիտաժողովին ու անոր ճշտած առաջնահերթութիւններուն հետ:

Հայաստանն ու Սփիւռքը ՊԱՐՏԱՒՈՐ ԵՆ գործի անցնելու, միասնաբար շրջադարձ կատարելու համար կործանարար ընթացքէն:

«Հայրենիք» - Բոստոն
Խմբագրական

«Օսկար»-ի մրցանակակիրները

Կինոարուեստի ամերիկեան ակադեմիան յայտնել է «Օսկար»-ի նոր դափնեկիրների անունները:

«Լաւագոյն ֆիլմ» է ճանաչուել «Օպենհայմեր» ֆիլմը:

«Լաւագոյն ռեժիսոր» անուանակարգում յաղթող է ճանաչուել Քրիստոֆեր Նոլանն իր «Օպենհայմեր» ֆիլմով:

«Լաւագոյն դերասան» է ճանաչուել Կիլիան Մերֆին «Օպենհայմեր» ֆիլմի համար:

«Լաւագոյն դերասանուհի» ճանաչուեց Էմմա Սթոուն «Խեղճուկրակները» ֆիլմի համար:

Բրիտանական «Հետաքրքրութիւնների գօտի» պատմական դրաման արժանացել է Օսկարի «Լաւագոյն արտասահմանեան ֆիլմ» անուանակարգում:

«Երկրորդ պլանի Լաւագոյն դերասան»՝ Ռոբերտ Դաունի կրտսեր («Օպենհայմեր»)

«Լաւագոյն օրիգինալ սցենար»՝ «Անկման անատոմիա»

«Երկրորդ պլանի Լաւագոյն դերասանուհի»՝ Դաւան Ջոյ Ռենդոլֆ («Լքւածները»)

«Լաւագոյն անիմացիոն ֆիլմ»՝ «Տղան եւ թռչունը»

«Լաւագոյն օպերատորական աշխատանք»՝Հոյտէ Վան Հոյտեմա («Օպենհայմեր»)

«Լաւագոյն մոնտաժ»՝ «Օպենհայմեր»

«Լաւագոյն սաունդթրեք»՝ Լիւդվիգ Գորանսոն («Օպենհայմեր»)

«Լաւագոյն վաւերագրական ֆիլմ»՝«20 օր Մարիուպոլում»

«Լաւագոյն երգ»՝ Ինչի՞ համար էի ստեղծուած: («Բարբի»)

«Լաւագոյն երաժշտութիւն»՝ «Օպենհայմեր»

«Լաւագոյն կարճամետրաժ վաւերագրական ֆիլմ»՝ «Վերանորոգուած վերջին խանութը»

«Լաւագոյն գեղարուեստական կարճամետրաժ ֆիլմ»՝«Հենրի Շաքարի հրաշալի պատմութիւնը»:

Panorama.am

«Երկիրը...

(Շար. 5-րդ էջից)

ճանապարհի ընդամէնը մի շրջադարձ է, բայց շատ կարեւոր է: Որ պետութիւնը դրան տիրի, կը դառնայ Հարաւային Կովկասի հիմնական քաղաքական դերակատար: Ճապոնիայի ափերից սկսուող այս մեծ եւ երկար երթուղին, անցնելով Չինաստանով, Միջին Ասիայով, Հայաստանի տարածքով կամ կողքով, գնալով Թուրքիա՝ հասնում է մինչեւ Եւրոպա: Ի՞նչ է դա տալիս՝ տնտեսական աճի հնարաւորութիւն այն պետութիւնների համար, որոնց տարածքով այս աշխարհաքաղաքական միջանցքն անցնում է: Իսկ տնտեսական ուժը վաղ թէ ուշ վերածւում է ռազմական հզօրութեան»,- նշել է Մատթէոսեանը:

Գեներալի կարծիքով՝ մի քանի տարուց մենք կարող ենք տեսնել ուժերի այլ դասաւորութիւն, որին մեր երկիրը պատրաստ չէ. «Մեր երկիրը կանգնած է պատերազմի շեմին: Եթէ նայում ենք միջազգային պրակտիկային եւ քաղաքագիտութեան օրէնքներին, ինչպէ՞ս են լուծւում կոնֆլիկտները: Դրանց լուծման չորս հիմնական ճանապարհ կայ՝ քաղաքական, տնտեսական, դիւանագիտական եւ ռազմական: Վերջինն ամենաարդիւնաւէտն է: Թէ՛ քաղաքական, թէ՛ տնտեսական, թէ՛ դիւանագիտական առումներով ներկայիս իշխանութիւնների պոտենցիալը գրեթէ զրոյական է: Նրանք այլեւս որեւէ գործընթացի վրայ չեն էլ կարողանում ազդել: Շատ մայրաքաղաքներում հանդիպում են մեր տարածաշրջանային կենտրոնների ղեկավարները եւ քննարկում են իրավիճակը Հարաւային Կովկասում՝ առանց Հայաստանի իշխանութիւնների ներկայացուցիչների: Ստացւում է, որ մեր երկրի ճակատագիրը, ապագան արդէն դուրս է եկել մեր ազդեցութեան կամ կառավարման տիրոյթից, եւ դա տնօրինում են այլ ուժային կենտրոնները»:

«Այս պայմաններում պատերազմի վտանգն անգամներով աճել է: Օրւայ իշխանութիւնները շաբաթը մէկ-երկու անգամ քաղաքականութեան շրջադարձի մասին քաղաքական յայտարարութիւններ են անում, որոնք մթնոլորտը շիկացնում են՝ փոխանակ մեղմացնեն: Մեր երկիրն արդէն վաղուց գտնւում է արտաքին ղեկավարման ռեժիմում, խելամիտ մարդն իր երկրի նկատմամբ իրեն այսպէս պահել չէր կարող: Փաստ է, որ կայ պատերազմի սպառնալիք: Ինչո՞վ ենք մենք դրան հակազդելու, ի՞նչ վիճակում ենք գտնւում: Երկիրը միտումնաւոր մտցուած է խափանման ռեժիմի մէջ, որտեղ ամէն դէպք եւ իրադարձութիւն ոչ թէ պատահականութիւն է, այլ համակարգուած խափանում»,- ամփոփել է Իշխան Մատթէոսեանը:

«Արտաքին...

(Շար. 3-րդ էջից)

գաղափարախօսութեան, Արցախեան պայքարի գաղափարական հիմնաւորման եւ արմատաւորման գործում: «Ազատամարտ»-ի մասին աւելացնեմ, որ շնորհիւ աշխատակիցների եւ թերթի շուրջ համախմբուած ազգային մտածողութեան տէր հիմնականում երիտասարդ մտաւորականութեան այն հայկական էութեամբ, ազատ-արհեստավարժ մամուլի օրինակ էր: Վստահօրէն կարող եմ յայտարարել, որ 1990-ականների դաշնակցական մամուլը մեծ դեր ունեցաւ անկախացած Հայաստանում ազատ եւ ազգային մամուլի կայացման գործում, իսկ նրա գործունէութեան կասեցումից յետոյ մամուլը մեծ յետընթաց ապրեց, այն գլխաւորաբար վերածւեց քաղաքական ուժերի ձեռքին կոյր գործիքի, որի հիմնական անելիքը ցայսօր վարկաբեկումն է եւ ինտրիգայնութիւնը: Դժբախտաբար այդ մամուլը ամօթալի դեր ունեցաւ հասարակութեան բարոյազրկման, ապազգայնացման քարոզի, հասարակական-քաղաքական մթնոլորտի ապականման, ներհասարակական պառակտումների գործում: Պատահական չէ, որ հէնց այդ աւազանից դուրս եկաւ հայութեան գլխին պատուհաս դարձած երկրի այսօրւայ ղեկավարը:

- Այսօրւայ դրութեամբ, լինելով նաեւ «Դրօշակ» պաշտօնաթերթի խմբագիրը, ինչ էք կարծում, մամուլը դերակատարութիւն ունի՞ հասարակութեանը ուղղորդելու, հասարակական մտքի ձեւաւորման գործում: Եթէ զուգահեռներ անցկացնենք, ապա դաշնակցական մամուլը այն ազդեցութիւնը, որն ունեցել է ժամանակին ինչպէս կարող է վերականգնել:

-Նախ ճշտենք, որ մամուլ ասելով այսօր հասկանում ենք եւ տպագիր մամուլը, եւ էլեկտրոնայինը եւ, ըստ էութեան, այդպիսի գործառոյթ են իրականացնում հասարակական ցանցերը: Վերջինները, օրինակ, վերածւել են այնպիսի մամուլի միջոցի, որոնցով տեղեկատուութիւնը շատ աւելի արագօրէն է սփռւում՝ կարողանալով ինտերակտիւ կապ ստեղծել հանրային լայն շրջանակների միջավայրում: Այդ պատճառով էլ նրանք աւելի մեծ չափով են ծառայում ամէն տեսակի «ֆէյքերի» տարածմանը՝ ընդորում հիմնականում կազմակերպուած ու համակարգուած՝ յաճախ հմտօրէն ղեկավարւող լայն քարոզչական ճակատի միջոցով: Պատահական չէ, որ հէնց այդ գործիքի միջոցով այսօրւայ Հայաստանի իշխանութիւնները կարողացան համապատասխան ներգործութիւն ունենալ զանգւածային գիտակցութեան վրայ եւ մտքի շփոթ գոյացնել սեփական ազգային շահերի դէմ: Նմանօրինակ գործընթացները լաւ հասկանալու համար, որպէս օրինակ, յիշենք արաբական աշխարհը, որն աւելի ներփակ է, պահպանողական, արեւմուտքից տարբերւող միջավայր է, այլ հոգեկերտուածք ունի կրօնական եւ այլ հանգամանքներով պայմանաւորուած: Սակայն այս երկրներն անգամ հնարաւոր դարձաւ յեղաշրջել նոյն հասարակական-երիտասարդական դաշտում աշխատելու, ներքին խնդիրները շահարկելու ճանապարհով, փակ համակարգերը ճեղքելով համացանցի միջոցով եւ ժողովուրդներին տանելով կեղծ եւ վտանգաւոր նպատակների յետեւից: Մեր իրականութեան օրինակով առկայ վիճակի ախտաճանաչումն անելով, սակայն, չենք կարող ձեռքներս ծալած նստել: Կը թւայ ինքս իմ վերեւի մտքերին հակասում եմ եթէ ասեմ, որ բոլոր ժամանակներն էլ ունեն իրենց դժւարութիւններն ու առանձնայատկութիւնները եւ դու կամ մրցակցային ույաղթող ես այդ միջավայրի մէջ կամ մրցակցային չես եւ ենթակայ ես այս երեւոյթի բացասական հետեւանքներին: Անհրաժեշտ է կատարել իրավիճակի անաչառ գնահատում բացերն ու թերութիւնները շտկելու համար: Անհրաժեշտ է արդիականանալ թէ՛ աշխատանքային գործիքակազմերի, եւ թէ՛ մտքի զարգացման առումով: Անհրաժեշտ է աւելի արհեստավարժ դառնալ, պէտք եղած պարագայում նաեւ համակարգից դուրս փնտրելով եւ ներգրաւելով համապատասխան կարող ուժերի, մասնագէտների եւ այլն: Ապացուցելու կարիք չկայ, որ համահայկական իրականութեան մէջ Դաշնակցութեան մամուլը շարունակում է մնալ ազգային քարոզչադաշտի հիմնական դերակատարներից մէկը եւ այնպէս չէ, որ մեր քարոզչութիւնը իր դերակատարութիւնը չունի հէնց հայաստանեան հանրային հարթակում: Իրականութիւնն այն է, որ այսօր իշխանութիւնների ազդեցութեան տակ մնում է հասարակութեան չիրազեկւած, չկողմնորոշւող, դեռեւս մոլորութեան մէջ խարխափող փոքրամասնութիւնը, բայց հէնց նրա վրայ էլ յենւում է իշխող ռեժիմը, իսկ մեծամասնութեան հարցում դեռեւս չի յաջողւել յաղթահարել կասկածամտութիւնը, վարանումը, հաւատի պակասը հէնց սեփական ուժերի նկատմամբ:

-Այն, որ Հայաստանը պէտք է ոտքի կանգնի յստակ է, այդ հարցում մեր անելիքը ո՞րն է: Ինչպէս է հնարաւոր ելքեր գտնել հասարակութեանը յոյս ներշնչելու համար:

-Այսօրւայ մեր գլխաւոր խնդիրը պէտք է լինի ժողովրդին համոզելը, որ ոչ թէ Նիկոլին հեռացնելն է նպատակը, այլ ազգային մտածողութեանն ու ռազմավարութեանը, ազգային արժէքներին եւ շահերին վերադարձը: Եթէ պայքարը չի տարւում գաղափարական-քաղաքական հակադիր մօտեցումները ժողովրդին ըմբռնելի դարձնելու ուղղութեամբ, ապա տեղի ունեցողը հասարակութեան զգալի մէկ հատւածի վրայ թողնում է պարզ աթոռակռւի տպաւորութիւն:

Անհրաժեշտ է աշխատել ժողովրդի հետ ողջ երկրում: Անհրաժեշտ է նրա մօտ գնալ եւ նրան հրապարակ հրաւիրել ունենալով յստակ ծրագիր, վերջնանպատակ եւ դրանց տանող ճանապարհային քարտէզ: Իր գործի եւ յաղթանակի նկատմամբ կամք ու հաւատ ունեցողը միայն կարող է ուրիշին կամք ու հաւատ ներշնչել:

Ժողովուրդին պէտք է ըմբռնելի եւ փաստարկւած բացատրել, որ Արցախը կորած չէ եւ առանց Արցախի ահա տեղի է ունենում Հայաստանի դանդաղ գրաւումը: Պէտք է բացայայտել այն իրողութիւնը, որ զիջելով ու ծնկի գալով միայն մեծացնում ես գալիք պատերազմների հաւանականութիւնը, իսկ նախանիկոլական մօտ 25 տարիներին գլխաւորաբար խաղաղութիւն է եղել, որովհետեւ այն պարտադրւել է թշնամուն: Ինչպէս եղաւ, որ 88-ին ոտքի ելած ժողովուրդը միմիայն յաղթանակներ էր տանում, իսկ Նիկոլի ղեկավարած երկիրը միայն պարտւում է: Ժողովրդի մէջ ոգի սերմանելու փոխարէն իշխանութիւնը միայն վախ ու դատապարտւածութիւն է ներարկում: Ում է պէտք այդպիսի իշխանութիւնը, ում է պէտք այն իշխանութիւնը, որը հայրենիքի մի մասը զիջում է իբրեւ թէ մնացածը փրկելու համար, սակայն յետոյ պարզւում է, որ դարձեալ պէտք է բաներ զիջի եւ, վստահաբար, սրան վերջ չկայ: Ում է պէտք այնպիսի իշխանութիւնը, որը սեփական ժողովրդի հետ յոյսեր չի կապում եւ անվտանգութիւն է մուրում դրսում, մուրում է նրանցից, ովքեր շահագրգռւած են եղել եւ լուռ հետեւել են, թէ ինքն ինչպէս է պարտւում եւ ինչպէս է զիջում: Թւում է այս ամէնը շատ պարզ է, բայց այդ դէպքում ինչո՞ւ ժողովրդի մի զգալի զանգւած շարունակում է մնալ անտարբեր: Այս ամէնը թելադրում է համապատասխան անելիքներ՝ այդ թւում քարոզչական ոլորտում:

Լուրջ եւ համակարգուած քարոզչական աշխատանքի բաց կայ, որը հիմնական դեր պէտք է խաղայ հասարակութեանը կրաւորական դիտողից ակտիւ գործողի վերածելու համար:

-Նշում էք, որ ազգային համակարգուած համընդհանուր ազատագրական պայքար է անհրաժեշտ, ինչպիսի՞ ձեւակերպում պէտք է ունենայ այդ պայքարը, եւ քարոզչութեան առումով «Դրօշակ»-ը ինչ դեր է կատարում այս դաշտում:

-«Դրօշակ»-ը եղել է ազգային ազատագրական պայքարի դրօշակակիր, այսօրւայ «Դրօշակ»-ը եթէ թերթէք, կը տեսնէք, որ հիմնական թեման Արցախն է, վտանգւած Հայաստանը եւ մեր պայքարը ազգային կենսական խնդիրների լուծման համար: Որքան էլ, որ հասարակական ցանցերը յաջող գործիք են քաղաքական իրադարձութիւններ հրահրելու, դրանց վրայ ազդելու առումով ես հաւատացած եմ, որ երբեք անցած չէ լուրջ, գաղափարա-քաղաքական մամուլի ժամանակը: Մարդկանց կարելի է հրահրել, սադրել համացանցի միջոցով, սակայն գաղափարապէս զինել, կրթել, վերափոխել ու վերադաստիարակել հնարաւոր է միայն լուրջ ու հիմնաւոր խօսքի միջոցով: «Դրօշակ»-ը շարունակում է մնալ այս ճակատի զինւորը, իսկ թէ ինչքանով է արդիւնաւէտ նրա գործունէութիւնը ես չէ, որ պէտք է գնահատեմ: Յամենայնդէպս յիշում եմ, որ անցած դարի 90-ականների նոյնանման իրողութիւնների պայմաններում մեր քարոզչութեանը յաջողւեց կաթիլ-կաթիլ ազդելով մտքերի շփոթի վրայ, ապազգային գաղափարախօսութեան ժայռը ճեղքել: Ես հիմա էլ հաւատում եմ այդ գործի անհրաժեշտութեանը եւ արդիւնաւէտութեանը: Անհրաժեշտ է գեներացնել ազգային առողջ միտքը, մղել նրան ակտիւութեան: Անհրաժեշտ է քարոզել Հայրենիք-Սփիւռք միասնական ռազմավարութեան որդեգրման անհրաժեշտութիւնը: Անցնող 35 տարիներին այդ բանը չարւեց, թէեւ Սփիւռքն ու Հայրենիքը միաւորւել են հոգեպէս: Դրա վկայութիւնն այն է, որ ամէն օր սփիւռքահայն արթնանում է իր հեռաւոր բնակավայրում այն մտահոգութեամբ, թէ տեսնես ինչ է տեղի ունենում հայրենիքում եւ հայաստանցին էլ իր կողքին այսօր սիրով տեղ է տալիս սփիւռքահային չնայած, որ օրւայ իշխանութիւնը, իրեն դաստիարակող առաջին իշխանութեան օրինակով, զբաղւած է վարկաբեկելով ու պառակտելով արցախցիներին, սփիւռքահայերին, ինչպէս եւ հէնց հայաստանցիներին:

Սա նշանակում է, որ գաղափարական աշխատանքը մշտական գործընթաց է, նշանակում է, որ մեր պայքարն ու նպատակները նոյնն են հետեւաբար եւ միասնական պէտք է լինի հայութիւնը՝ ներքին ու արտաքին չարիքի դէմ: Համակարգուած ու միասնական պայքար պէտք է տարւի ապազգային հոսանքի դէմ, ընդդէմ արտաքին ու ներքին պարտւողական եւ նահանջողական քարոզչութեան: Անհրաժեշտ է աշխատել երիտասարդութեան հետ՝ արմատներին հաւատարիմ սերնդին փոխանցել պայքարի եւ հայութեան ապագայի վառող ջահը:

-Շնորհակալութիւն:

Հարցազրոյցը՝ ՍԻՒՆԷ ՖԱՐՄԱՆԵԱՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու մեր թեմի սիրելի ժողովրդի զաւակներին եւ յատկապէս Զէյթուն քաղաքամասի մեր սիրելի ժողովրդին յայտնում ենք, որ 2024 թ. շաբաթ, մարտի 16-ին **Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, յիշատակ չարչարանացն եւ մտանելոյն ի վիրապն** տօնն է. այս տօնը համընկնում է համանուն եկեղեցու անւանակոչութեան տօնին, այս առիթով նախագահութեամբ թեմիս բարեխնամ առաջնորդ՝

ԳԵՐԾ. Տ. ՍԵՊՈՒՀ Ս. ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

շաբաթ, մարտի 16-ին 2024 թ. Զէյթուն քաղաքամասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում մատուցելու է հանդիսաւոր ս. պատարագ:

Սկիզբ ժամերգութեան	ժամը 9:00-ին
Ս. եւ անմահ պատարագ	ժամը 10:00-ին
Քարոզ	ժամը 11:00-ին

Յաւարտ ս. պատարագի տեղի է ունենալու հոգեհանգստեան յատուկ արարողութիւն եկեղեցու բարերար հանգուցեալ՝ Գրիգոր Մելիքեանի եւ Մելիքեան զերդաստանի ննջեցեալների հոգիների խաղաղութեան համար:

Սիրով մեր հաւատացեալ ժողովրդին հրաւիրում ենք, որ մասնակցեն յիշեալ հոգեպարար արարողութեանց եւ հաղորդուեն մեր հաւատոյ հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի հաւատքի կեանքի խորհրդով:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝

ՇԱՔԷ ԲԵԳԼԱՐԵԱՆԻ

ցաւալի մահուան առաջին տարելիցի առթիւ՝ ուրբաթ, մարտի 15-ին, Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Վարդուհի Բեգլարեան՝ մայրը:

Շարմաղ Դաւթեան՝ դուստրը:

Ռազմիկ եւ Արմինէ Բեգլարեաններ՝ եղբայրը եւ եղբօր կինը՝ ընտանեօք:

Անահիտ եւ Աւետիս Մուրադեաններ՝ քոյրը եւ քրոջ ամուսինը:

Հերմինէ եւ Փելիքս Յովհաննիսեաններ՝ քոյրը եւ քրոջ ամուսինը՝ ընտանեօք:

ԱԼԻՔ
Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

ԱԼԻՔ-ի
Internet-ային էջն է՝
www.alikonline.ir

ՏԵՂԵԿԱՆՔ

Ուրախ ենք տեղեկացնելու,
որ «Ա. Աւետիսեան» ազգ. բուժարանի
դէմքի գեղեցկութեան ծառայութիւնների
մատուցման բաժինը՝

Նոռուզի եւ Զատկւայ

տօների առիթով կատարում է

դէմքի բոտաքսի ներարկում (تزریق بوتاکس صورت)

700.000 թումման՝ արտակարգ զեղչով:

Յիշեալ հնարաւորութիւնից օգտուելու նպատակով
նախապէս պայմանաւորուել եւ զանգահարել
77256457 - 60 (ներքին 223) հեռախօսահամարներին:

«Ա. ԱՒԵՏԻՍԵԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄԻՆ

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Նարինէ Ղարիբեանին, Ղարիբեան ընտանիքին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

ՄԵԽԱԿ ՂԱՐԻԲԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

ԻՐԱՆԻ ԻՍԼ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԹԵՀՐԱՆԻ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԱՐԱ ՇԱՀՎԵՐԴԵԱՆ ԵՒ ԱԼԵՆՈՒՇ ՇԱՀՎԵՐԴԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Այսու ջերմօրէն շնորհաւորում ենք

պրն. Արա Շահվերդեանին՝

Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան կողմից պատգամաւոր ընտրուելու կապակցութեամբ,

մաղթելով յաջողութիւններ եւ ձեռքբերումներ:

«ՀԱՅ ԿԻՆ» ԵՒ ԿԻՍ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ՝ «ԱՐՄԵՆՈՒՀԻ», «ԱՆԱՀԻՏ» ԵՒ «ԱՆԻ»

رهن آپارتمان
مجموعه فوق العاده شیک
واقع در خیابان سنائی
۱۵۰متر، ۲ خوابه، تخلیه، طبقه اول
دارای فول امکانات و ۴ سال ساخت
جهت رهن کامل می باشد.
۰۹۱۲۱۲۱۸۰۴۴

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر — سخت افزار
ارتقاء سیستم — نرم افزار
سرویس در محل — شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
هواپیمایی قشم
QeshmAir
نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر
شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن
Թռիչքներ է իրականացնում
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը,
նաեւ յաւելեալ թռիչքներ
մարտի 23-ին, 27-ին եւ 31-ին (۴ – ۸ – ۱۲ فروردین)
դէպի Հայաստան եւ վերադարձ
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف
WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰



ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Անհուն վշտով ցաւակցում ենք կազմակերպութեանս անդամ՝ Յովիկ Գոլազիզեանին, Տէր-Պետրոսեան եւ Գոլազիզեան ընտանիքներին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

ԳՈՀԱՐ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

ցաւալի մահուան կապակցութեամբ:

Հ. Մ. «ԱՐԱՐԱՏ» Կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝ 88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

Հրանտ Բագրատեան.

«Երբ ես վարչապետ էի, Արեւմուտքն անընդհատ ասում էր՝ էդ Իրանի ճանապարհը փակէք, ասում էի՝ «այ քեզ բան», կաբինետից դուրս էինք հանում»

Մարտի 11-ին, «Միասին» շարժման հրաւիրած ասուլիսի ընթացքում ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատեանը յայտարարեց, որ Հարաւային Կովկասում Արեւմուտքը պայքարում է Ռուսաստանի դէմ, նրան միայն դա է հետաքրքրում:

Ի դէպ, Ռուսաստանը չի ասում՝ Արեւմուտքին դէմ գնացէք, ընդամէնն ասում է՝ չափի մէջ մնացէք, մեզ հետ կնքուած պայմանագրերը յարգէք»,- շեշտեց Բագրատեանը՝ յիշեցնելով, որ Հայաստանի հարեւան Իրանը եւ ՀՀ ռազմավարական դաշնակից Ռուսաստանն Արեւմուտքի թշնամիներն են, իսկ Հայաստանն այդ երկու երկրների հետ ամենաշատ տնտեսական կապերն ունենք:

«Երբ ես վարչապետ էի, Արեւմուտքն անընդհատ ասում էր՝ էդ Իրանի ճանապարհը փակէք, ասում էի՝ «այ քեզ բան», Իրանի ճանապարհը փակենք….բա կարողանո՞ւմ էք մի հատ Թուրքիայի ճանապարհը բացէք, որ սէնց խօսում էք: Իրանի ճանապարհը փակելու պահանջի դէպքում պարզապէս կաբինետից դուրս էինք հանում, վերջ, նման խօսակցութիւն չի կարող լինել»,- ասաց ՀՀ նախկին վարչապետը:

168.am

Մենք....

(Շար. 1-ին էջից)

յայտարարութիւնում:

«Հայաստանի շուրջ վերջին զարգացումները՝ տարածաշրջանում շարունակւող անկայունութեան եւ լայնածաւալ միջազգային հակամարտութիւնների համատեքստում, խորացրել են մեր երկրի անկախութեան, անվտանգութեան, ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան համար առկայ սպառնալիքները:

Մեր խորին համոզմամբ՝ Հայաստանին անհրաժեշտ է հաւասարակշռուած, գրագէտ հաշուարկուած եւ ռացիոնալ արտաքին քաղաքականութիւն, որտեղ առաջնային կը լինեն Հայաստանի, այլ ոչ թէ այլ պետութիւնների ազգային շահերը: Գերտէրութիւնների միջեւ շարունակւող միջազգային հակամարտութեան մէջ Հայաստանին ներքաշելը յանգեցնելու է անդառնալի հետեւանքների:

Միջպետական յարաբերութիւնների զարգացումը նոր գործընկերների հետ չպէտք է իրականացւի պատմականօրէն ձեւաւորուած եւ իրաւականօրէն ձեւակերպած դաշնակցային յարաբերութիւնների հաշիւին: Հայաստանի իշխանութիւնները պէտք է գործեն Հայաստանի ու այլ երկրների շահերի համադրման եղանակով, եւ ոչ մի պարագայում չգայթակղուեն այդ շահերի հակադրման շնորհիւ ենթադրեալ դիւիդենտներ քաղելու հեռանկարով: Միջպետական յարաբերութիւնների վերաբերեալ անորոշ ու առճակատման տրամաբանութեամբ արւող յայտարարութիւնները ոչնչով չեն նպաստելու Հայաստանի անվտանգային միջավայրի ամրապընդմանը, այլ միայն լրացուցիչ ռիսկեր եւ վտանգներ են առաջացնելու: Հայկական դիւանագիտութիւնը պէտք է ամրապնդի գոյութիւն ունեցող դաշինքները եւ հաստատի նոր գործընկերային յարաբերութիւններ, ոչ թէ ձեռք բերի հերթական հակառակորդներ:

Աշխարհն օրէցօր սրւող գլոբալ հակամարտութեան մէջ է, որը աննախադէպ լարուածութիւն է ստեղծում միջազգային յարաբերութիւնների համակարգում: Մեր տարածաշրջանը եւս դարձել է հակասական շահերի բախման խաչմերուկ: Այս ծայրայեղ վտանգաւոր իրավիճակում, միայն իրատեսական արտաքին քաղաքականութիւնը եւ պետականամէտ որոշումները թոյլ կը տան պաշտպանել հայ ժողովրդի կենսական շահերն ու անվտանգութիւնը: Մենք պատասխանատու ենք ապագայ սերունդների առջեւ Հայոց պետականութեան պահպանման համար»,- նշուած է յայտարարութիւնում:

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
IRAN AIRTOUR AIRLINES
Qeshm Air
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۳۷۴ ۱۰۲ ۲۲ ۸۲۴ , ۳۷۴ ۹۶۵ ۷۵ ۳۰۵+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

SET Coffee
فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار هاگنولیا، پلاک A117
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه ست

املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن
مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان،
خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ -۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
սամաւոր ճգալի, նքրա ջատ, ցրուգ մսա,
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388

ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

Թեհրանն ու Մոսկւան ընդգծել են տարածաշրջանային խնդիրների շուրջ խորհրդակցութիւնների ընդլայնման անհրաժեշտութիւնը

«ԱԼԻՔ» - ԱԳ նախարարութեան Արեւմտեան Ասիայի եւ Հիւսիսային Աֆրիկայի վարչութեան գլխաւոր տնօրէն, նախարարի յատուկ քաղաքական հարցերով աւագ խորհրդական Ալի Ասղար Հաջին հանդիպել է ՌԴ ԱԳՆ Մերձաւոր Արեւելքի եւ Հիւսիսային Աֆրիկայի վարչութեան գլխաւոր տնօրէն Ալեքսանդր Կինշչակի հետ: Հաղորդում է ԻՌՆԱ-ն:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են տարածաշրջանի վերջին իրադարձութիւնները, մասնաւորապէս, Գազայի ժողովրդի դէմ Սիոնիստական ռեժիմի յանցագործութիւնները, ինչպէս նաեւ Սիրիայի, Եմէնի եւ Լիբիայի հետ կապած հարցեր:

Կողմերն ընդգծել են նաեւ տարածաշրջանային հարցերի շուրջ երկկողմ խորհրդակցութիւնները շարունակելու եւ ընդլայնելու անհրաժեշտութիւնը եւ մտքեր փոխանակել Սիրիայում վերջին զարգացումների, այդ թւում՝ քաղաքական եւ դաշտային իրավիճակի, ինչպէս նաեւ տնտեսական ու հումանիտար իրավիճակի բարելաւման եւ քաղաքական գործընթացի շարունակմանն ուղղուած համատեղ ռազմավարութիւնների վերաբերեալ:

ՌԴ ԱԳՆ.

«Տեղի ունեցածը Հայաստանի ղեկավարութեան համար պէտք է, որ մտորումների առիթ հանդիսանայ»

ՌԴ ԱԳ նախարարութիւնն արձագանգել է Մեծ Բրիտանիայի պաշտպանութեան փոխնախարար Ջէյմս Հիպիի յայտարարութեանը, թէ իրենք պատրաստ են աջակցելու Հայաստանին «Ռուսաստանից բխող սպառնալիքներից պաշտպանւելու» հարցում:

«Մեզ այլեւս չի զարմացնում այն փաստը, որ Լոնդոնը յետխորհրդային տարածքում, այդ թւում՝ Հարաւային Կովկասում դադարել է թաքցնել իր բոլոր քայլերի հակառուսական բնոյթը: Բայց Հիպիի անկեղծ խոստովանութիւնը նաեւ ուղղակիօրէն հաստատում է այն փաստը, որ Արեւմուտքը ձգտում է Հայաստանը դարձնել տարածաշրջանում իր վարած քաղաքականութեան գործիք՝ ուղղուած Մոսկւայի դէմ»,- յայտարարել է Ռուսաստանի Արտգործնախարարութիւնը:

ՌԴ ԱԳՆ-ն նշել է նաեւ, որ տեղի ունեցածը Հայաստանի ղեկավարութեան համար պէտք է, որ մտորումների առիթ հանդիսանայ:

Yerevan.today

Պուտինը ընտրութիւններում կարող է հաւաքել ձայների 82%-ը

ՌԴ նախագահական ընտրութիւններում գործող նախագահ Վլադիմիր Պուտինը կարող է հաւաքել ձայների 82%-ը, սպասւող մասնակցութիւնը 71% է: Հաղորդում է ռուսական «ՌԻԱ Նովոստի»-ն:

Նման տեւեալներ են բերուած ընտրութիւններից առաջ հասարակական կարծիքի ուսումնասիրման համառուսաստանեան կենտրոնի վերջին ընտրական սոցհարցումում:

Միւս թեկնածուների միջեւ ձայները բաշխւել են հետեւեալ կերպ.

– Նիկոլայ Խարիտոնով (Կոմունիստական կուսակցութիւն) – 6%,

– Վլադիսլաւ Դաւանկով («Նոր մարդիկ» կուսակցութիւն) – 6%,

– Լէոնիդ Սլուցկի (Լիբերալ–դեմոկրատական կուսակցութիւն) – 5%:

168.am

Վարդան Ոսկանեան.

«Եթէ ուզում էք հասկանալ, թէ ինչպիսի Հայաստան է իրականում պատկերացնում Բաքւի վարչախումբը նայէք այս «քարտէզին»»

Իրանագէտ Վարդան Ոսկանեանը սոցիալական ցանցերի իր հարթակներում գրել է.

«Եթէ ուզում էք հասկանալ, թէ ինչպիսի՞ Հայաստան է իրականում պատկերացնում Բաքւի բարբարոսական վարչախումբը նայէք այս «քարտէզին», որը պատմութեան ասպարէզ առաջին անգամ ոտք դրած արհեստածին Ադրբեջանը ներկայացրել է Փարիզի վեհաժողովին 1919 թւականին, եւ որը փաստացիօրէն առաջ է մղում այժմ:

Յատկապէս մշտական լռութեան «ուխտ» որդեգրածները կարող են «շնորհաւորել զմիմանս», զի Երեւանը կարծես «մեծահոգաբար» թողնւում է Հայաստանին՝ որպէս սահմանային քաղաք»:

«Իրանը....

(Շար. 1-ին էջից)

ցանկացած հնարաւոր ագրեսիա եւ յայտարարում է, որ կողմերը (Երեւանն ու Բաքուն) պէտք է իրենց հարցերը լուծեն բանակցութիւնների միջոցով: Տարածաշրջանում լարուածութիւնն ուղղուած է ոչ միայն Հայաստանի անվտանգութեան, այլ նաեւ Իրանի դէմ: Տարածաշրջանում երրորդ ուժերի, այդ թւում՝ ԵՄ դիտորդների առկայութիւնը Հայաստանում, խորացնում է հակասութիւնները եւ առաջացնում տարածաշրջանի երկրների շահերի բախում: Թեհրանը մտահոգւած է, որ այդ դիտորդները կարող են տեւեալներ հաւաքել Իրանի վերաբերեալ, ինչի մասին զեկուցել է հայկական կողմին: Հայաստանն իր հերթին վստահեցրել է, որ հակաիրանական գործողութիւններ չի ձեռնարկում: Բայց Իրանը չի վստահում Արեւմուտքին»,- ասել է փորձագէտը:

Նա ընդգծել է, որ գոյութիւն ունեցող ձեւաչափերից միայն «3+3» ձեւաչափով Իրանը կարող է աջակցել Հայաստանի դիրքորոշմանը, ինչի մասին են վկայում վերջին հանդիպմանը յաջորդած յայտարարութեան հայանպաստ կէտերը, որտեղ խօսւում է ագրեսիայից զերծ մնալու անհրաժեշտութեան մասին: